ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» օգոստոսի 2020թ. № 236

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի ԹԻՎ 232 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաձողովի նախագահ՝

Անահիտ Գյուլազյան-Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի քարտուղար՝

Վեներա Խաչատրյան-Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող

Հանձնաժողովի անդամներ՝

Յարմալոյան Նորայր- Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան

Միշա Թամամյան- Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Կարեն Մաթոսյան-Սոց. ծառայությունների Սպիտակի տարածքային գործակալության գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)

«Բավական Պետրոսյան-հոգեթերապևտ (համաձայնությամբ)

Գայանե Պապիկյան-մանկավարժ (համաձայնությամբ):

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2016 թվականի օգոստոսի 31-ի «Սպիտակի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և 2011 թվականի ապրիլի 15-ի թիվ 368 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 232 որոշումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» օգոստոսի 2020թ. № 234

ԱՐՄԻՆԵ ԶԱԼԻՆՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Գյուլազյանի զեկուցագիրը, Սպիտակի երաժշտական դպրոցում կազմակերպվող միջոցառման ժամանակ «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի դաշնամուրի դասատու և նախկին տնօրեն Արմինե Զալինյանին խրախուսելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հուշանվեր, նվեր-տոպրակ և շնորհակալագիր ձեռք բերելու համար հատկացնել 18 900 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» օգոստոսի 2020թ. № 238

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը, Սպիտակ համայնքի բնակիչներ Էմիլ Գրիգորի Բաղդասարյանի և Գայանե Սաշայի Մնոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Էմիլ Գրիգորի Բաղդասարյանին, Գայանե Սաշայի Մնոյանին իրենց և իրենց անչափահաս երեխաների՝ Ալեքս Էմիլի Բաղդասարյանի (ծնված 2012 թվականի մայիսի 12-ին), Գրիգորի Էմիլի Բաղդասարյանի (ծնված 2017 թվականի հուլիսի 12-ին) կողմից սեփականության իրավունքով ձեռքբերվելիք ՀՀ, մարզ Լոռի, համայնք Սպիտակ քաղաք, Եռանկյունի թաղամաս, Շահումյան փողոց, 5 շենք, 10 բնակարան հասցեում գտնվող գույքը գրավ դնել իրենց անչափահաս երեխաների անունից:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 28
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» օգոստոսի 2020թ. № 239

ՄԱՐԻՑԱ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2679458 վկայականը և Մարիցա Հրաչիկի Շահմուրադյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մարիցա Հրաչիկի Շահմուրադյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ուզբեկական Կ-5 թաղամասում գտնվող 06-006-173-001-009 կադաստրային ծածկագրով 52,3 քառակուսի մետր մակերեսով բնակարանի «քաղաք Սպիտակ, Ց-5 թաղամաս 3 շենք, թիվ 3 բնակարան» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Ուզբեկական Կ-5 թաղամաս, 3 շենք, բնակարան 3» հասցեով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 28
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» օգոստոսի 2020թ. № 240

ՎԱՀՐԱՄ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ, ՍԵԴԱ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԵՎ ՍՈՒՍԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿՆԵՐԸ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 10-րդ և 13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշումով, հաշվի առնելով, որ Վահրամ Մալխասյանին, Սեդա Թովմասյանին և Սուսան Մալխասյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ուզբեկական Կ-2 թաղամաս, թիվ 27 հասցեում գտնվող 0,047 հեկտար ընդհանուր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1993 և 2011 թվականներին ինքնակամ կառուցված 116,52 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան, 50,62 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի, 17,19 քառակուսի ընդհանուր մետր մակերեսով աստիճանահարթակների, 0,48 քառակուսի մետր մակերեսով պարսպի, ինքնակամ բացված մեկ դռան և մեկ պատուհանի պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12072018-06-0010 վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ

եզրակացությունը և Սեդա Թովմասյանի, Սուսան Մալխասյանի և Վահրամ Մալխասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սեդա Թովմասյանին, Սուսան Մալխասյանին և Վահրամ Մալխասյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ուզբեկական Կ-2 թաղամաս, թիվ 27 հասցեում գտնվող 06-006-0178-0003 կադաստրային ծածկագրով 0,047 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 116,52 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 50,62 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը, 17,19 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով աստիճանահարթակները, 0,48 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, ինքնակամ բացված մեկ դուռը և մեկ պատուհանը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սեդա Թովմասյանի, Սուսան Մալխասյանի և Վահրամ Մալխասյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Սեդա Թովմասյանին, Սուսան Մալխասյանին և Վահրամ Մալխասյանին.

1) համայնքի բյուջե վճարել 120 982 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 28
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» օգոստոսի 2020թ. № 241

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԸ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 10-րդ և 13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշումով, հաշվի առնելով, որ Կարեն Հայրապետյանը 2012 թվականին ինքնակամ քանդել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Կամոյի փողոց, թիվ 4 հասցեում գտնվող 0,0347 հեկտար ընդհանուր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա գտնվող 88,7 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը և 2007, 2012 և 2013 թվականներին ինքնակամ կառուցել 101,94 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տուն, 22,14 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակ, 4,27 քառակուսի ընդհանուր մետր մակերեսով աստիճանավանդակ, 4,21 քառակուսի մետր մակերեսով պարիսպ, որոնց պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 0226526 վկայականը, «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը և Կարեն Հայրապետյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Կարեն Հայրապետյանի սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Կամոյի փողոց, թիվ 4 հասցեում գտնվող 06-006-0277-0015 կադաստրային ծածկագրով 0,0347 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 101,94 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 22,14 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը, 4,27 քառակուսի մետր մակերեսով աստիճանավանդակը, 4,21 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Կարեն Հայրապետյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Կարեն Հայրապետյանին.

1) համայնքի բյուջե վճարել 153 707 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 28
ք.Սպիտակ